

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԶԻՄՈՒՄ

ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Ω[°]ρ պնդումը ճիշտ չէ քիմիական տարրերի վերաբերյալ.

- 1) մետաղական տարրերի թիվը մեծ է ոչմետաղական տարրերի թվից
- 2) ոչմետաղական տարրը ազատ վիճակում առաջացնում է ոչմետաղ պարզ նյութ
- 3) նույն տարրի առաջացրած պարզ նյութերը՝ ալոտրոպները, ունեն նույն հալման ջերմաստիճանը
- 4) քիմիական տարրերի թիվը փոքր է պարզ նյութերի թվից

2 Հետևյալներից ո՞րը կարելի է համարել ֆիզիկական երևույթ.

- 1) երկաթի (II) հիդրօքսիդի զանգվածի ավելացումը օդի և ջրի առկայությամբ
- 2) կալցիումի կարբիդի հիդրոլիզը
- 3) օրգանական նյութի փոփոխությունը
- 4) արգոնի ստացումն օդից

3 Որքա՞ն է սպինային քվանտային թվի գումարային արժեքը $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^5$ էլեկտրոնային բանաձևերում ունեցող հիմնական վիճակում գտնվող տարրի ատոմի համար.

- 1) 1/2
- 2) 3/2
- 3) 5/2
- 4) 1


4 Ω[°]ր շարք են ներառված հետևյալ միացությունների 1) H₂O, 2) SiO, 3) CO, 4) NO համարները՝ դասավորված ըստ տարրերի թթվածնի հետ առաջացրած քիմիական կապի բևեռայնության աճի.

- 1) 4, 3, 1, 2
- 2) 4, 3, 2, 1
- 3) 3, 4, 1, 2
- 4) 3, 1, 2, 4

5 Ω[°]ր շարք ներառված բոլոր տարրերի առավելագույն վալենտականությունը չի համընկնում պարբերական համակարգում դրանց խմբի համարի հետ.

- 1) N, O, F, Cu
- 2) P, O, S, N
- 3) N, Cl, P, C
- 4) Cu, Al, O, Au

(6 - 7) Տրված են հետևյալ աղերք.



6

Այդ աղերից ո՞րն է փոխազդում և՝ կալիումի հիդրօքսիդի, և՝ արծաթի նիտրատի լուծույթների հետ.

- 1) Բ
- 2) գ
- 3) դ
- 4) ս

7

Մեկ մոլ քանակով ո՞ր աղի ջերմային քայքայման հետևանքով զանգվածի առավելագույն կորուստը կկազմի 108 գ.

- 1) Բ
- 2) գ
- 3) դ
- 4) ս

8

Ո՞ր շարքի բոլոր նյութերի մոլեկուլները կարող են առաջացնել ջրածնային կապեր.

- 1) հեքսան, մեթանոլ, ջուր, մրջնալղեհիդ
- 2) ամինաքացախաթթու, ամոնիակ, էթանոլ, մրջնաթթու
- 3) մեթանոլ, բենզոլ, ֆենոլ, ֆտորաջրածին (հեղուկ)
- 4) ամոնիակ, էթան, մեթիլֆորմիատ, քացախաթթու

9

$(NH_4)_2Cr_2O_7 \rightarrow N_2 + Cr_2O_3 + H_2O$ ուրվագրով ռեակցիան վերօքս ռեակցիաների ո՞ր տեսակին է պատկանում, և ոքա՞ն է հավասարման քանակաշափական գործակիցների գումարային թիվը.

- 1) միշմոլեկուլային, 7
- 2) անհամամասնական, 8
- 3) ներմոլեկուլային, 8
- 4) ներմոլեկուլային, 7

10 Ω՞րն է էթիլենի հիդրատացման ռեակցիայի ջերմաքիմիական հավասարումը, եթե
0,5 մոլ էթիլենը հիդրատացնելիս անջատվել է 22 կՋ ջերմություն.

- 1) $\text{CH}_2 = \text{CH}_{(q)} + \text{H}_2\text{O}_{(h)} \rightarrow \text{CH}_3\text{CH}_2\text{OH}_{(h)} + 22 \text{ kJ}$
- 2) $\text{CH}_2 = \text{CH}_{(q)} + \text{H}_2\text{O}_{(h)} \rightarrow \text{CH}_3\text{CH}_2\text{OH}_{(h)} + 44 \text{ kJ}$
- 3) $\text{CH}_2 = \text{CH}_{(q)} + \text{H}_2\text{O}_{(h)} \rightarrow \text{CH}_3\text{CH}_2\text{OH}_{(h)} + 13,2 \text{ kJ}$
- 4) $\text{CH}_2 = \text{CH}_{(q)} + \text{H}_2\text{O}_{(h)} \rightarrow \text{CH}_3\text{CH}_2\text{OH}_{(h)} - 44 \text{ kJ}$

11 Ω՞ր ռեակցիայում հավասարակշռությունը կտեղաշարժի դեպի ձախ, եթե
հավասարակշռության մեջ գտնվող գազային խառնուրդը սեղմվի.

- 1) $2\text{SO}_{2(q)} + \text{O}_{2(q)} \rightleftharpoons 2\text{SO}_{3(q)}$
- 2) $2\text{NH}_{3(q)} \rightleftharpoons \text{N}_{2(q)} + 3\text{H}_{2(q)}$
- 3) $\text{CO}_{(q)} + \text{H}_2\text{O}_{(q)} \rightleftharpoons \text{CO}_{2(q)} + \text{H}_{2(q)}$
- 4) $2\text{NO}_{2(q)} \rightleftharpoons \text{N}_{2}\text{O}_{4(q)}$

12 Ի՞նչ նյութեր են առաջանում Na_2SO_3 -ի լուծույթում այդ աղի առաջին փուլի հիդրոլիզից.

- 1) NaOH և H_2SO_4
- 2) NaOH և NaHSO_3
- 3) NaOH և NaHSO_4
- 4) NaHSO_3 և H_2O

13 Ծծմբաջրածինը բրոմաջրի միջով անցկացնելիս բրոմին հատուկ գույնը
անհետանում է և միաժամանակ ի՞նչ նյութ է գոյանում.

- 1) H_2SO_4
- 2) H_2SO_3
- 3) ազատ ծծումբ
- 4) SO_2

14 Ինչպես սկզբանի $\text{C}_{(w)} + 2\text{CO}_{2(q)} = 2\text{CO}_{(q)}$ ռեակցիայի արագության հաստատունը,
եթե CO_2 -ի կոնցենտրացիան մեծացվի 2 անգամ .

- 1) կմեծանա 4 անգամ
- 2) չի փոխվի
- 3) կփոքրանա 2 անգամ
- 4) կմեծանա 2 անգամ

15

Համապատասխանեցնել իներտ էլեկտրոդներով ջրային լուծույթում էլեկտրոլիզի ենթարկված նյութի բանաձևերը, այդ նյութերի անողային օքսիդացման ուրվագիրը և կաթոդի վրա անջատվող նյութի բանաձևերը.

Նյութի բանաձև	Անողային օքսիդացման ուրվագիր	Կաթոդի վրա անջատվող նյութի բանաձև
ա) $\text{CuCl}_{2(\text{հալոյթ})}$	1) $\text{Cu}^{2+} + 2\text{e} \rightarrow \text{Cu}$	Ա) H_2
բ) $\text{NaCl}_{(\text{լ-Պ})}$	2) $2\text{H}_2\text{O} - 4\text{e} \rightarrow \text{O}_2 + 4\text{H}^+$	Բ) Cu
գ) $\text{KOH}_{(\text{հալոյթ})}$	3) $2\text{H}_2\text{O} - 2\text{e} \rightarrow \text{H}_2 + 2\text{OH}^-$	Գ) Ag
դ) $\text{AgNO}_{3(\text{լ-Պ})}$	4) $2\text{Cl}^- - 2\text{e} \rightarrow \text{Cl}_2$	Դ) Cl_2
	5) $4(\text{OH})^- - 4\text{e} \rightarrow \text{O}_2 + 2\text{H}_2\text{O}$	Ե) K
		Զ) Na

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշտությամբ:

- 1) ա4Բ, բ4Ա, գ5Ե, դ2Գ
- 2) ա4Բ, բ2Ա, գ3Ա, դ3Ա
- 3) ա1Դ, բ4Զ, գ5Ե, դ2Գ
- 4) ա1Դ, բ4Զ, գ3Ե, դ2Դ

16

Երկարի, պղնձի և այումինի փոշիների խառնուրդի վրա ավելացրել են ավելցուկով ալկալու լուծույթ և քողել մինչև ընթացող ռեակցիայի(ների) ավարտը: Հնարավոր ռեակցիայի(ների) ավարտից հետո ի՞նչ նյութեր կպարունակի պինդ մնացորդը.

- 1) Cu, Al
- 2) $\text{Fe(OH)}_2, \text{Cu}$
- 3) $\text{Fe}, \text{Cu}, \text{Al(OH)}_3$
- 4) Fe, Cu


17

Ո՞ր նյութի ջրային լուծույթում կատիոնների թիվը երեք անգամ մեծ կլինի անիոնների թվից (հիդրոլիզն անտեսել).

- 1) ալյումինի սուլֆատ
- 2) երկարի(III) քլորիդ
- 3) մագնեզիումի քլորիդ
- 4) կալիումի ֆոսֆատ

18

Ի՞նչ գործընթաց է արտահայտում հետևյալ ուրվագիրը.



- 1) Չը կոշտության ավելացում
- 2) Չը գունավորում
- 3) Չը կոշտության վերացում
- 4) Չը մանրէազերծում

19

Ո՞ր շարք ներառված նյութերն են օգտագործվում որպես վերականգնիչներ արդյունաբերության մեջ մետաղների ստացման համար.

- 1) C, CO, Mg, Ag
- 2) C, CO₂, Mg, H₂
- 3) CO, NO₂, CH₄, Al
- 4) C, CO, H₂, Al

20

Ո՞ր շարք է ներառված $Cl_2 \rightarrow HCl \rightarrow Cl_2 \rightarrow KClO_3 \rightarrow O_2 \rightarrow H_2O$ փոխարկումներն իրականացնելու համար անհրաժեշտ ազդանյութերի և պայմանների ճիշտ հաջորդականությունը.

- 1) H₂ (hv), KMnO₄, KOH (լուծ. 100 °C), t° և կատ., H₂
- 2) H₂ (hv), KMnO₄, KCl, t° և կատ., H₂
- 3) H₂O, MnO₂, KOH (լուծ., 100 °C), KNO₃, H₂
- 4) H₂ (hv), CH₄, KOH, t°, H₂

21

Կեկտրական վառարանում ածխածինը ո՞ր նյութի հետ է փոխազդում՝ առաջացնելով կարբորունդ: Ո՞ր շարք է ներառված այդ նյութն առաջացնող տարրի նշանը, կարբորունդի բանաձևը և վերջինիս բյուրեղավանդակի տեսակը.

- 1) Si, SiC, ատոմային
- 2) Si, Si₂C, մոլեկուլային
- 3) Ca, CaC₂, մոլեկուլային
- 4) Al, Al₄C₃, իոնային

22

Ի՞նչ ծավալային հարաբերությամբ պետք է խառնել CO և CO₂ գազերը, որպեսզի խառնուրդի խտությունը հավասարվի արգոնի խտությանը.

- 1) 3 : 1
- 2) 1 : 3
- 3) 1 : 4
- 4) 1 : 2

23

Ո՞ր գործոներն են ազդում հեղուկներում զագերի լուծելիության վրա.

- ա) ջերմաստիճանը
 բ) զագի բնույթը
 ց) հեղուկի մեջ զագն անցկացնելու արագությունը
 դ) ճնշումը

- 1) ա, զ, դ
- 2) բ, գ,
- 3) ա, բ, դ
- 4) ա, բ, գ, դ

24

Ո՞րն է սիլիցիումի(IV) օքսիդի և նատրիումի հիդրօքսիդի միջև ընթացող ռեակցիայի կրծատ խոնային հավասարումը.

- 1) $\text{SiO}_2 + 2\text{Na}^+ + 2\text{OH}^- = \text{Na}_2\text{SiO}_3 + \text{H}_2\text{O}$
- 2) $\text{SiO}_2 + 2\text{OH}^- = \text{SiO}_3^{2-} + \text{H}_2\text{O}$
- 3) $\text{Si} + 2\text{OH}^- + \text{H}_2\text{O} = \text{SiO}_3^{2-} + 2\text{H}_2$
- 4) $2\text{SiO}_2 + 2\text{OH}^- = 2\text{SiO}_3^{2-} + \text{H}_2$

(25-26) Կալիումի հիդրօքսիդի սառը լուծույթի մեջ անցկացրել են քլոր:

25

Ո՞ր նյութերն են առաջացել.

- 1) KClO և KClO_3
- 2) KCl և KClO_4
- 3) KCl և KClO_3
- 4) KCl և KClO

26

Ըստ ընթացող ռեակցիայի հավասարման՝ ոքքա՞ն է օքսիդիչի նյութաքանակը (մոլ).

- 1) 2,5
- 2) 2
- 3) 3
- 4) 0,5

27 Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի այումինի հիդրօքսիդը համապատասխան պայմաններում.

- 1) NaOH , HNO_3 , H_2SO_4
- 2) CuSO_4 , H_2SO_4 , SO_2
- 3) Fe(OH)_3 , Na_2SO_4 , P_2O_5
- 4) H_3PO_4 , CaSO_4 , CO_2

28 Ո՞ր շարքի մետաղներից յուրաքանչյուրի հետ հպումը կդանդաղեցնի երկարի էլեկտրաքիմիական կոռոզիան.

- 1) Zn , Mg , Mn
- 2) Ag , Hg , Mg
- 3) Cu , Ag , Au
- 4) Cu , Ni , Zn

29 Ո՞ր շարքի բոլոր նյութերի հետ կփոխազդի ջրածին պարզ նյութը համապատասխան պայմաններում.

- 1) Ca , CO , C_2H_6
- 2) Ca , Br_2 , C_6H_6
- 3) Zn , Cu , CO
- 4) Ag , H_2O , C_6H_6

30 Նատրիումի հիդրօքսիդի 12 % զանգվածային բաժնով 200 գ լուծույթի մեջ անցկացրել են 8,96 լ (ն. պ.) ածխածնի (IV) օքսիդ: Ի՞նչ քանակով (մոլ) և ի՞նչ նյութ(եր) է (են) ստացվել լուծույթում.

- 1) 0,3 NaHCO_3
- 2) 0,3 Na_2CO_3 և 0,1 NaHCO_3
- 3) 0,2 Na_2CO_3 և 0,2 NaHCO_3
- 4) 0,4 Na_2CO_3


31 Հետևյալ միացություններից որի՝ (որո՞նց) բրոմացումից կարող է ստացվել միայն մեկ միաբրոմածանցալ.

ա) ն-պենտան, բ) 2-մեթիլբութան, ց) 2,2-երկմեթիլպրոպան

- 1) բ, զ
- 2) ա
- 3) զ
- 4) ա, բ

32

Հստ փոխարկումների հետևյալ շղթայի՝ ո՞ր շարք են ներառված X_1 , X_2 օրգանական նյութերի անվանումները և X_3 օրգանական միացության մոլեկուլում բացասական և դրական օրսիդացման աստիճանը ցուցաբերող տարրերի զանգվածների հարաբերությունը համապատասխանաբար.



- 1) պրոպիլբրումիդ, պրոպիլսպիրտ, 1 : 6
- 2) պրոպիլբրումիդ, պրոպեն, 9 : 1
- 3) պրոպիլբրումիդ, պրոպիլսպիրտ, 6 : 1
- 4) իզոպրոպիլբրումիդ, իզոպրոպիլսպիրտ, 2 : 9

33


Համապատասխանեցնել քիմիական ռեակցիայի մեխանիզմը, դրան համապատասխանող հավասարումը և ռեակցիայի արդյունքում ածխածնի ատոմի հիբրիդային վիճակի փոփոխությունը.

Քիմիական ռեակցիայի մեխանիզմ	Ռեակցիայի հավասարում	Հիբրիդացում
ա) իոնային միացում բ) էլեկտրոֆիլ տեղակալման գ) ռադիկալային միացման դ) ռադիկալային տեղակալում ե) պոկում	1) $\text{CH}_3\text{-CH}_2\text{-CH}_2\text{-CH}_3 \xrightarrow{\text{AlCl}_3} \text{CH}_3\text{-}\overset{\text{CH}_3}{\underset{\text{CH}_3}{\text{CH}}}\text{-CH}_3$ 2) $\text{CH}_2=\text{CH}_2 + \text{HBr} \rightarrow \text{CH}_3\text{-CH}_2\text{Br}$ 3) $\text{C}_6\text{H}_6 + \text{Cl}_2 \xrightarrow{\text{FeCl}_3} \text{C}_6\text{H}_5\text{Cl} + \text{HCl}$ 4) $\text{C}_2\text{H}_4 \rightarrow \text{C}_2\text{H}_2 + \text{H}_2$ 5) $\text{C}_6\text{H}_6 + 3\text{Cl}_2 \xrightarrow{h\nu} \text{C}_6\text{H}_6\text{Cl}_6$ 6) $\text{CH}\equiv\text{CH} + 2\text{Br}_2 \rightarrow \text{CHBr}_2 - \text{CHBr}_2$ 7) $\text{CH}_3\text{-CH}_2\text{Cl} + \text{KOH}_{(\text{սպիրտ})} \rightarrow$ $\rightarrow \text{CH}_2=\text{CH}_2 + \text{KCl} + \text{H}_2\text{O}$ 8) $\text{C}_2\text{H}_6 + \text{Cl}_2 \xrightarrow{h\nu} \text{C}_2\text{H}_5\text{Cl} + \text{HCl}$	Ա) $\text{sp}^3 \rightarrow \text{sp}^2$ Բ) $\text{sp} \rightarrow \text{sp}^3$ Գ) $\text{sp}^2 \rightarrow \text{sp}$ Դ) $\text{sp}^2 \rightarrow \text{sp}^3$ Ե) $\text{sp}^2 \rightarrow \text{sp}^2$ Զ) $\text{sp}^3 \rightarrow \text{sp}^3$

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշշտ.

- 1) ա2Դ, բ3Ե, զ5Դ, դ8Զ, ե7Ա
- 2) ա6Բ, բ8Զ, զ5Դ, դ6Դ, ե7Ա
- 3) ա2Դ, բ3Ե, զ6Բ, դ8Զ, ե4Գ
- 4) ա1Զ, բ3Ե, զ5Դ, դ6Դ, ե4Գ

(34-35) Իրականացվել են հետևյալ փոխարկումները.




34 Որքա՞ն է Q օրգանական նյութի հարաբերական մոլեկուլային զանգվածը.

- 1) 160
- 2) 124,5
- 3) 231
- 4) 195,5

35 Որո՞նք են U և P օրգանական նյութերի անվանումները համապատասխանաբար.

- 1) մեթան, ստիրոլ
- 2) մեթան, տոլուոլ
- 3) ացետիլեն, տոլուոլ
- 4) ացետիլեն, քսիլոլ

36 Հետևյալ կարբոնաթթուներից որո՞նք չեն սոսացնում ցիս-տրանս իզոմերներ.



- 1) p, q
- 2) w, r
- 3) q, r
- 4) w, p

37 Ո՞րն է բաց թողած բառը.

Հեղուկ ճարպերը փոխարկվում են պինդ ճարպերի _____ռեակցիայի
արդյունքում

- 1) հիդրման
- 2) պոլիկոնդենսացման
- 3) պոլիմերացման
- 4) հիդրատացման

38

Ո՞րն է $\text{C}_4\text{H}_7\text{O}_2\text{Cl}$ բաղադրությամբ միացության անվանումը, եթե այն նուր թթվի հետ տաքացնելիս առաջացնում է CH_4O և $\text{C}_3\text{H}_5\text{ClO}_2$ երկու նյութեր, որոնցից առաջնը մետաղական նատրիումի հետ փոխազդելիս անջատվում է ջրածին, իսկ երկրորդը ամոնիակի հետ փոխազդելիս առաջանում է $\text{C}_3\text{H}_7\text{O}_2\text{N}$ բաղադրությամբ ամինաթթու, որի ջրային լուծույթը չեղոք է.

- 1) քլորպրոպանաթթվի մեթիլէսթեր
- 2) քլորքացախաթթվի մեթիլէսթեր
- 3) քլորբութանաթթու
- 4) քլորքացախաթթվի էթիլէսթեր

39

Հետևյալ միացություններից որո՞նք կփոխազդեն պղնձի (II) հիդրօքսիդի հետ համապատասխան պայմաններում.

ա) մալթոզ, բ) էթանոլ, գ) մրջնաթթու, դ) զիգերին, ե) բենզիլսալիկրու, զ) դեզօքսիոհրոզ.

- 1) ա, զ, դ, զ
- 2) բ, դ, ե, զ
- 3) ա, զ, դ, ե
- 4) ա, բ, ե, զ

40

Ո՞ր նյութերի հետ կփոխազդի օ- ամինապրոպիոնաթթուն:

ա) NaOH , բ) NaCl , զ) HCl , դ) ալանին.

- 1) ա, բ, դ
- 2) բ, զ, դ
- 3) ա, զ, դ
- 4) ա, բ, զ

41

Արծաթի նիտրատի ջրային լուծույթը ենթարկել են կեկտրոլիզի իներտ կեկտրոդներով: Ստացված լուծույթի չեզոքացման համար ծախսվել է նատրիումի հիդրօքսիդի 25% զանգվածային բաժնով 80 գ ջրային լուծույթ: Այնուհետև անողի վրա անջատված գազը ենթարկել են կեկտրական պարպման, ինչի հետևանքով ծավալը կրճատվել է 10%-ով: Որքա՞ն է պարպման ենթարկված գազի փոխարկման աստիճանը (%):

42

Բիսմութի²¹⁰ Bi իզոտոպի կիսատրոնիման պարբերությունը 5 օր է: 10 օրում բիսմութի սկզբնական քանակի ո՞ր մասն է (%) քայլայվում:

43

Օքոնֆոսֆորական թթվի ջրային լուծույթում հայտնաբերվել են 1,1742 գ հիդրօքսնիում իոններ: Այդ լուծույթի լրիվ չեզոքացման վրա ծախսվել է 50,4 գ կալիումի հիդրօքսիդ: Որքա՞ն է թթվի երկրորդ փուլի դիսոցման աստիճանը (%), եթե առաջին փուլն ընթացել է 20 %-ով, իսկ երրորդ փուլով թթուն գործնականորեն չի դիսոցվել:

44 Մալթոզ երկսախարիդի լրիվ հիդրոլիզից գոյացած վերջանյութի սպիրտային խմորումից ստացված սպիրտից Լեբեդի եղանակով 44,8 լ (ն.պ.) դիվինիլ է սինթեզվել: Ի՞նչ զանգվածով (գ) մալթոզ է հիդրոլիզվել:

45 Հաստատուն ճնշման պայմաններում իրականացրել են ամոնիակի սինթեզ՝ փոխազդեցության մեջ դնելով 0,02 մոլ/լ ազոտ և 0,07 մոլ/լ ջրածին: Հավասարակշռություն հաստատվելուց հետո ստացված գազային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի հավասարվել է 4,375: Որքա՞ն է ամոնիակի գոյացման միջին արագությունը [մմոլ/(լ · ժ)], եթե հավասարակշռության հաստատման համար պահանջվել է 0,5 ժամ:

- (46-47) 25°C ջերմաստիճանի և $132,8$ կՊա ճնշման պայմաններում $18,625 \text{ l}$ ծծմբաջրածինն այրել են թթվածնի ավելցուկում, իսկ այրման արզասիքներն անցկացրել նաև դիումի հիդրօքսիդի 20% քանակվածային քածնով 240 mJ լուծույթի մեջ ($\rho = 1,25 \text{ g/m}^3$): ($R = 8,3 \text{ J/K} \cdot \text{mol}$, $T_0 = 273 \text{ K}$):

46 Որքա՞ն է լուծույթում առաջացած փոքր մոլային քանակվածով աղի քանակվածը (q):

47 Որքա՞ն է վերջնական լուծույթի քանակվածը (q):

(48-49) Երկարի(II) և պղնձի(II) նիտրատների 219,2 գ զանգվածով խառնուրդը մինչև հաստատուն զանգված շիկացնելիս ստացվել է 62,72 լ (ն. պ.) զագային խառնուրդ, իսկ Fe^{2+} -ը օքսիդացել է մինչև Fe^{3+} :

48 Որքա՞ն է երկարի(II) նիտրատի զանգվածը (q) ելային խառնուրդում:

49 Որքա՞ն է զագային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի:

- (50-51) Նատրիումի սուլֆատի նմուշը լուծել են ջրում և ստացել $113,6 \text{ ml}$ ($\rho=1,25 \text{ g/ml}$) լուծույթ: Այնուհետև ջուրը շողիացրել են և ստացել տասօրյա բյուրեղահիդրատի բյուրեղներ, որոնց զանգվածը 45 gr ամուլ մեծ է եղել ելային նմուշի զանգվածից:

50 Որքա՞ն է անջուր նատրիումի սուլֆատի զանգվածային բաժինը (%) լուծույթում:

51 Նատրիումի սուլֆատի 10% զանգվածային բաժնով լուծույթ պատրաստելու նպատակով ի՞նչ ծավալով (մլ) ջուր պետք է ավելացնել ելային լուծույթին:

(52-53) 5,3 գ զանգվածով նատրիումի կարբոնատ պարունակող լուծույթն առանց մնացորդի փոխազդել է ազոտական թթվի 50 % զանգվածային բաժնով 9,45 գ լուծույթի հետ, ինչի հետևանքով անջատվել է զար, և ստացվել է լուծույթ, որը գոլորշացրել են, իսկ պինդ մնացորդը՝ շիկացրել (գոլորշացնելիս աղերը փոփոխության չեն ենթարկվել):

52 Որքա՞ն է գոլորշացումից հետո ստացված պինդ մնացորդի զանգվածը (մգ):

53 Որքա՞ն է շիկացումից ստացված չոր գազային խառնուրդի միջին մոլային զանգվածը (գ/մոլ):

(54-55) Հազեցած միահիմն կարբոնաթթվի կալիումական աղի և ավելցուկով վերցրած կալիումի հիդրօքսիդ պարունակող 203 գ խառնուրդը միահալելիս անջատվել է զագ: Ստացված պինդ մնացորդին ավելացրել են 120 գ սիլիցիումի (IV) օքսիդ և կրկին միահալել, որի հետևանքով անջատվել է 11,2 լ (ն. պ.) զագ, և մնացել է ջրում չյուծվող 30 գ պինդ մնացորդ:

54

Որքա՞ն է ելային խառնուրդում կարբոնաթթվի կալիումական աղի զանգվածը (գ):

55

Որքա՞ն է առաջին ռեակցիայի ժամանակ անջատված օրգանական նյութի մոլեկուլում օքսիդի թիվը:

(56-58) Մեկ լիտր ծավալ ունեցող փակ անթռում 294 գ զանգվածով ծծմբական թթուն տաքացնելիս որոշ ժամանակ անց ստեղծվում է $2H_2SO_{4(q)} \rightleftharpoons 2H_2O_{(q)} + 2SO_{2(q)} + O_{2(q)}$ հավասարակշռությունը: Հավասարակշռային խառնուրդից առանձնացրած թթվածնում սպիտակ ֆուֆորն այրելիս ստացվել է 56,8 գ P_2O_5 :

56

Որքա՞ն է հավասարակշռային հաստատունի թվային արժեքը:



57

Որքա՞ն է ռեակցիային մասնակցած սպիտակ ֆուֆորի նյութաքանակը (մմոլ):

58

Որքա՞ն է թթվածին տարրին բաժին ընկնող պրոտոնների քանակը (մոլ) հավասարակշռային խառնուրդում գտնվող թթվային օքսիդում:

- (59-61) Նորմալ բութանի 29 գ նմուշը կրեկինզի ենթարկելիս կլանվել է $0,62 \text{ Q կ} \cdot \text{Զ}$ ջերմություն, իսկ կրեկինզն ընթացել է երկու ուղղությամբ՝ բատ հետևյալ ջերմաքիմիական հավասարումների.



Ստացված զազային խառնուրդն անցկացրել են անհրաժեշտ քանակով բրոմի 8 % զանգվածային բաժնով բրոմաջրի միջով:

59

Բութանի n° բ մասն է (%) քայլայվել մեթանի և պրոպենի առաջացմամբ:

60

Որքա n° է ծախսված բրոմաջրի զանգվածը (q):

61

Ի՞նչ զանգվածով (q) կալիումի պերմանգանատի 20 % զանգվածային բաժնով լուծույթ է անհրաժեշտ միայն ծանր ալկենն օքսիդացնելու համար:

- (62-64) Ամոնիակի և թթվածնի 336 լ (ն. պ.) խառնուրդը, որում թթվածնի ծավալային քածինը 60 % է, պղտում-ռողիումային կատալիզատորի վրայով բաց թողնելիս օքսիդացել է ամոնիակի 75 %-ը: Ստացված գազագոլորշային խառնուրդը փակ անոթում պահել են մինչև բոլոր քիմիական ռեակցիաների ավարտը:

62

Որքա՞ն է առաջացած աղի գանգվածը (գ) փակ անոթում ստացված լուծույթում:

63

Որքա՞ն է փակ անոթում ստացված լուծույթի գանգվածը (գ):

64

Որքա՞ն է ջրի մոլային բաժինը (%) ստացված լուծույթում:

(65-67) $C_nH_{2n+1}COOC_nH_{2n+1}$ բնդիանուր բանաձեն ունեցող 65 գ էսթերի և նրա քանակից 2,5 անգամ մեծ քանակով նատրիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի փոխազդեցությունից ստացված աղի զանգվածը 25 գրամով մեծ է սպիրուի զանգվածից: Հիդրոլիզից ստացված լուծույթը գոլորշացրել են, իսկ պինդ մնացորդը շիկացրել մինչև հաստատուն զանգված:

65

Որքա՞ն է էսթերի մոլեկուլում ածխածնի ատոմների թիվը:

66

Որքա՞ն է շիկացնելիս անջատված գազի զանգվածը (q):

67

Որքա՞ն է շիկացումից հետո ստացված պինդ մնացորդի զանգվածը (q):

68

Համապատասխանեցնել նյութի բանաձևը և ստացման եղանակը.

Նյութի բանաձև	Ստացման եղանակ
ա) HNO_3	1) Էթանոլի միջմոլեկուլային դեհիդրատացում
բ) $\text{CH}_3\text{COCH}_2\text{CH}_3$	2) 2-բութանոլի կատալիտիկ օքսիդացում օդի թթվածնով
գ) CH_3COOH	3) կումոլի օքսիդացում
դ) $\text{C}_6\text{H}_5\text{OH}$	4) ազոտի(IV) օքսիդի և ջրի փոխազդեցություն
	5) ացետիլենի հիդրատացում
	6) բութանի կատալիտիկ օքսիդացում
	7) O_2 -ի առկայությամբ ջրով NO_2 -ի կլանում

69

Հաստատել կամ հերքել պնդումների ճշմարտացիությունը I և II խմբերի գլխավոր ենթախմբերի տարրերի առաջացրած միացությունների հատկությունների վերաբերյալ.

- 1) $[\text{CH}_3\text{NH}_3]^{\text{+}}\text{Cl}^{-}$ պարունակող լուծույթին նատրիումի հիդրօքսիդ ավելացնելիս և տաքացնելիս անջատվել է գազ, իսկ լուծույթում հայտաբերվել են Cl^- իոններ:
- 2) $\text{A} \xrightarrow{\text{HNO}_3} \text{KOH} \xrightarrow{\text{HNO}_3} \text{KNO}_3 \xrightarrow{\text{t}} \text{B}$ փոխարկումների շղթայում A և B նյութերը կարող են համապատասխանաբար լինել K և KNO_2 :
- 3) Ալկալիական մետաղները միացություններում դրսւորում են «-1» օքսիդացման աստիճան:
- 4) Նատրիումի օքսիդի 3,1 գ նմուշը 96,9 գ ջրում լուծելիս ստացվում է նատրիումի հիդրօքսիդի 4% զանգվածային բաժնով լուծույթ:
- 5) Օքսիդացման-վերականգնման ռեակցիաներում NaCl , K_2S , CaH_2 միացությունների մոլեկուլներում առկա ոչ մետաղների ատոմները վերականգնիչներ են:
- 6) II խմբի գլխավոր ենթախմբի տարրերի բարձրագույն օքսիդների հիդրատների հիմնային հատկությունները թուլանում են կարգաթվի մեծացմանը զուգընթաց:

70

Ածխածնի(IV) օքսիդից, ածխաջրածնից և ամոնիակից բաղկացած գազային խառնուրդին ավելացրել են 6,2 լ թթվածին (ավելցուկով վերցրած) և այրել:
Ստացված 14,2 լ գազագոլորշային խառնուրդը խիտ ծծմբական թթվի միջով անցկացնելիս ծավալը դարձել է 9 լ: Վերջինս ավելցուկով վերցրած հիմքի լուծույթի միջով անցկացնելիս մնացել է 0,8 լ գազային խառնուրդ, որի միջին մոլային գանգվածը 30 գ/մոլ է (բոլոր ծավալները չափված են նույն պայմաններում): Հաստատել կամ հերքել պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ:

- 1) Այրումից ստացված գազերի չոր խառնուրդում ազոտի և թթվածնի ծավալները հավասար չեն:
- 2) Գազերի ելային խառնուրդը պարունակել է հավասար ծավալներով ամոնիակ և ածխաջրածին:
- 3) Այրման գործընթացում ծախսվել է 5,8 լ թթվածին:
- 4) Ելային խառնուրդը պարունակում էր 5 լ CO₂:
- 5) Անհայտ ածխաջրածնի մոլեկուլում ածխածնի ատոմների մոլային բաժինը 50 % է:
- 6) Անհայտ ածխաջրածնի իզոմերներում մեթիլ խմբերի թիվը հինգ է: